



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 19 Օգոստոս, 2024

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, փոքր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

### ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԵՆ

**Ք**ու ձեռքերովդ ստեղծեցիր եւ զիս կազմեցիր. փոր որ հասկնամ եւ սորվիմ քու պատուէրներդ: Աստուածավախ բոլոր մարդիկ կ'ուրախանան զիս փեսնելով, որովհետեւ ես իմ յոյսս խօսքիդ վրայ դրեր եմ: Գիտեմ, ով Տէր, արդար են վճիռներդ. փառապանքի զիս մարնեցիր՝ որովհետեւ հաւարարիմ եւ խօսքիդ: Թող քու սերդ մխիթարէ հիմա զիս, ինչպէս խոստացար ինձի՝ ծառայիդ: Ինձի հանդէպ քու գթութիւնդ ցոյց փոր, որպէսզի ես կեանք ունենամ, որվհետեւ եւ Օրէնքէդ հաճոյք կ'առնեմ: Թող ամօթով մնան ամբարտաւանները, որոնք առանց պարճառի անիրաւութիւն կ'ընեն ինձի: Գալով ինձի, հրահանգներդ են իմ խոկումիս առանցքը: Թող զան ինձի միանան քու երկիւղ ունեղոցները, անոնք՝ որոնք պատուիրաններդ կը ճանչնան: Թող իմ սիրտս ամբասիր ըլլայ կանոններուդ կարարման մէջ, որպէսզի բնաւ եւ ամօթով չմնամ:

### ՇԱՐԱԿԱՆ

*Մեղայ տէր բազումողորմ Աստուած. մեղայ ողորմեա:*

*Մեղայ տէր եւ անկանխմ առաջիքո. մեղայ ողորմեա:*

*Մեղայ տէր խոստովանիմ ըզյանցանս իմ. մեղայ ողորմեա:*

### ԱՊՈԹՔ

Քեզի կ'ուղղենք մեր աղօթքը, ով Աստուած: Քեզի վստահած ենք, թող ամօթով չմնանք: Յայտնէ մեզի Քու կամքդ, սորվեցուր Քու ճամբաներդ: Սորվեցուր եւ առաջնորդէ՝ որ անխախտ մնանք ճշմարտութեանդ մէջ, որովհետեւ Դուն ես մեր Աստուածն ու փրկիչը, եւ Քեզի վստահած ենք փեսարար: Տէր, յիշէ որ Դուն միշտ գթած ու ողորմած ես. ներէ մեր մեղքերն ու յանցանքները, եւ Քու արդարութեամբդ առաջներդէ մեզ, որպէսզի հասնինք յաւիտենական կեանքին միշտ փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ այժմէն մինչեւ յաւիտեան: Ամէն:

## ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)*

Փրկել գմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածամին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ր եւ ողորմեա:

## ՇԱՐԱԿԱՆ-ԱՐՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ՍԱՂՄՈՍ 67

### ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

**Ա**ստուած, ողորմէ մեզի եւ օրինէ մեզ,  
բարեհաճ եղիր մեզի հանդէպ.  
որպէսզի աշխարհը գիտնայ քու կամքդ,  
բոլոր ազգերը ճանչնան թէ դուն ես փրկիչը:  
Ժողովուրդները թող գոհութիւն յայտնեն քեզի, ով Աստուած,  
բոլոր ժողովուրդները թող գոհութիւն յայտնեն քեզի:  
Ազգերը թող ուրախանան ու ցնծան,  
որովհետեւ դուն արդարութեամբ կը դապեա ժողովուրդները,  
եւ աշխարհի բոլոր ազգերը դուն ինքդ կ'առաջնորդես:  
Ժողովուրդները թող գոհութիւն յայտնեն քեզի, ով Աստուած,  
բոլոր ժողովուրդները թող գոհութիւն յայտնեն քեզի:  
Երկիրը իր բերքը փուսաւ,  
Աստուած՝ մեր Աստուածը իր օրհնութիւնը մեզի փուսաւ:  
Աստուած թող օրհնէ մեզ,  
եւ ամբողջ աշխարհը թող երկիւղով պապուէ զայն:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ**

Մէկ այլ ուրիշ գոհաբանութեան երգ Սաղմոս, որ այս անգամ անձնական, անհատական կարգավիճակէն կ'անցնի հաւաքականի: «Ինձի»էն կ'անցնի «մեզի»: Կը սկսի խնդրանքով մը. «Աստուած, ողորմէ մեզի եւ օրհնէ մեզ եւ բարեհաճ եղիր»: Այս Սաղմոսը նաեւ յիշեցում է վկայութիւն փալու, որպէսզի խաւարի մէջ ապրող մարդուն լոյս ըլլալու եւ լոյսին գալու: Ահա թէ ինչու Քրիստոս նախքան այս աշխարհէն մեկնումը աղօթեց երկնաւոր Հօր, ըսելով. «Կ'աղօթեմ որ զիրենք այս աշխարհէն չվերցնես, այլ զիրենք չարէն պահես»: Որովհետեւ արդարին ներկայութիւնը այս աշխարհի մէջ վկայութիւն փալու, լոյս եւ աղ դառնալու համար, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը: Յաճախ կը մոռնանք թէ մենք որպէս հաւաքացեալներ ինչու կանգ երկրի վրայ, եւ ընդհակառակը՝ քիչ մը նեղութիւն, քիչ մը ցաւ, քիչ մըն ալ փառապանք, անմիջապէս պիտի ուզենք մեկնիլ այս աշխարհին: Միրելիներ, երբ արդէն մեկնումի պահ գայ, արդէն պիտի մեկնինք ուզենք կամ ոչ: Բայց եթէ փակաւի ընելիք ունինք: Ահա թէ ինչու Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Փափաքս է Քրիստոսի հետ ըլլալ, բայց եթէ փակաւի ընելիք ունիմ թող որ մնամ», իսկ Պօղոս Առաքեալի ընելիքը, մարդիկը Քրիստոսի բերելու:

Այս խնդրանքով, որ Աստուած ողորմի եւ օրհնէ, որպէսզի անոնք վկայութիւնը փայլն աշխարհին եւ ազգերը ճանչնային թէ Աստուած է ճշմարիտ փրկիչը: Հերաքրքրական է «բարեհաճ եղիր մեզի հանդէպ» նախադասութիւնը, որ կը նշանակէ, «Թող դէմքդ փայլի մեր վրայ»: Եւ ահա այդ դէմքը փայլքը նաեւ մե՝ շրջապատին: Ահա թէ ինչպէս կարելի է լոյս ըլլալ, այն ինչ որ Քրիստոս թելադրեց ըլլալու, լոյս եղէք:

«Որպէսզի աշխարհը զիտնայ քու կամքդ, եւ ճանչնան թէ դուն ես փրկիչը»: Աստուծոյ կամքն է որ մեղաւոր մարդը չկորսուի, այլ՝ փրկուի, իսկ ո՛վ է փրկողը, նոյնինքն՝ Աստուած: Բայց այս բոլորի մասին ով պիտի վկայէ, այն անձը, որ ողորմութիւն գրաւ, այն անձը որ շնորհք ստացաւ, այն անձը, որ աստուածային օրհնութեամբ լեցուեցաւ:

Ահա այս բոլորի համար, ժողովուրդները թող գոհութիւն, շնորհակալութիւն յայտնեն Աստուծոյ, եւ ազգերը ուրախանան ու ցնծան, ինչո՛վ Աստուծոյ բերած, փուած, պարգեւած փրկութեամբ: Բան մը որ մարդը ի վիճակի չէր ու փակաւի չէ, եւ ահա Աստուած Իր իսկ նախաձեռնութեամբ պարտաւորեց ու հրամցուց, շնորհեց այդ փրկութիւնը աշխարհի դրկելով Իր միաձին Որդին, մեր Տէրն ու փրկիչ Յիսուս Քրիստոսը: Առաւել եւս, ազգերուն ուրախութիւնն ու ցնծութիւնը անոր համար, որ Աստուած արդարութեամբ կը դափնէ ժողովուրդները: Այսօր, որքան կը փառապանք ի փես անարդարութեան, այդ ալ նոյնինքն մարդուն ձեռքով հանդէպ իր նմանին: Կընդուզինք, կը պտռականք անարդարութեան դիմաց, բայց ահա Սաղմոսերգուն կը վստահեցնէ, որ պիտի գայ պահը երբ Աստուած արդարօրէն դափնելու ժողովուրդները: Տակաւին, կը ներկայացնէ ըսելով. «Աշխարհի բոլոր ազգերը դուն ինքդ կ'առաջնորդես»: Միրելիներ, այնպէս կը թուի, այնպէս կը կարծենք, որ աշխարհը, այս պարագային մարդկութիւնը ինք կը ծրագրէ, իր ուզած ձեւով կ'ապրի, կը գործէ, իր ծրագիրները կը մշակէ, եւ ըստ իրեն յաջողութիւնները կ'արձանագրէ, առանց սակայն, անդրադառնալու, որ Աստուած Ինք է որ կ'առաջնորդէ աշխարհի բոլոր ազգերը:

Դարձեալ կոչ կ'ուղղէ, որ ժողովուրդները գոհութիւն յայտնեն Աստուծոյ: Աստուծոյ օրհնութիւնը նաեւ կը յայտնուի երկրի բերքով, երբ երկիրը իր բերքը կու փայ որպէս օրհնութիւն աստուածային: Այնքան արեւն որ մարդը Աստուծոյ կամքին համաձայն կ'ապրի նաեւ կը վայելէ Աստուծոյ օրհնութիւնը, իսկ անոր հակառակ՝ անէ՛ծք: Դրախտի պարտեզին մէջ ինչ էր վիճակը առաջին մարդուն, վայելելու Աստուծոյ օրհնութիւնն ու բարիքները, այն պահուն որ մեղքը գործեց երկիրը փուշ եւ փայրասկ փուսաւ:

Ի վերջոյ, դարձեալ կը խնդրէ որ Աստուած օրհնէ մեզ, եւ ամբողջ աշխարհը թող երկիւղով պատուէ գԱյն: Այն ինչ որ արժան եւ իրաւ է Աստուծոյ պաշտամունք ընձայելու եւ երկիւղով, վայելուչ: Այն ինչ որ Աստուծոյ է վայել, եւ ոչ թէ այդ փառքը ուրիշին փալու: